ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2025

ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾ

ԹԵՍՏ 1

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 Նշվածներից ո՞րն է օգտագործվում 750 հարգի ամուսնական մատանու փայլեցման ժամանակ:

1) փայլեցման սարքը
2) ինժեկտորը
3) վալցը
4) ֆիլեռը

2 Որքա՞ն է 135մմ X 82մմ X 4 մմ չափսերով 999,9 հարգի պլատինի ձուլակտորի քաշը (21.45 գ/սմ³):

1) 949.406 գ
2) 949.806 գ
3) 949.625 գ
4) 949.704 գ

3 Ոսկու հարգի փոփոխման դեպքում՝ 32.5 գրամ 750 հարգի ոսկու համաձուլվածքից 585 հարգի ոսկու համաձուլվածք ստանալու համար քանի՞ գրամ խառնուրդ (լիգատուրա, ալոյ) է անհրաժեշտ:

1) 9.60 գ
2) 9.50 գ
3) 9.16 գ
4) 9.75 գ

4 Որքա՞ն է 125 մմ X 90 մմ X 6 մմ չափսերով 999,9 հարգի արծաթի ձուլակտորի քաշը: (10.50 գ/սմ³):

1) 708.485 գ
2) 708.775 գ
3) 708.85 գ
4) 708.75 գ

5 Քանի՞ գրամ 999,9 հարգի ոսկի է անհրաժեշտ՝ 35 գրամ 585 հարգի ոսկու համաձուլվածքից 750 հարգի ոսկու համաձուլվածք ստանալու համար:

1) 23.1 գ
2) 22.2 գ
3) 23.7 գ
4) 22.5 գ

6 Նշված մետաղներից ո՞րն է ամենաղժվարահալը:

1) ոսկին
2) իրիդիումը
3) պլատինը
4) պալադիումը

7 Ոսկու հարգի փոփոխման դեպքում՝ 7.5 գրամ 999,9 հարգի ոսկուց 375 հարգի ոսկու համաձուլվածք ստանալու համար քանի՞ գրամ խառնուրդ (լիգատուրա, ալոյ) է անհրաժեշտ:

1) 12.23 գ
2) 12.65 գ
3) 12.88 գ
4) 12.48 գ

8 Որքա՞ն է 180 մմ X 85 մմ X 4 մմ չափսերով 999,9 հարգի ոսկու ձուլակտորի քաշը (19.3 գ/սմ^3):

1) 1315.82 գ
2) 1281.15 գ
3) 1181.16 գ
4) 1085.25 գ

9 Նշվածներից ո՞րը թանկարժեք քար չէ:

1) սապֆիրը
2) ռուբինը
3) զմրուխտը
4) նեֆրիտը

10 Որքա՞ն է 170 մմ X 100 մմ X 8 մմ չափսերով 999,9 հարգի ռոդիումի ձուլակտորի քաշը (12.4 գ/սմ³):

1) 1686.2 գ
2) 1686.6 գ
3) 1686.4 գ
4) 1686.8 գ

11 Նշված հարգերից ո՞րն է համապատասխանում ՀՀ-ում ընդունված ոսկու համաձուլվածքի դրոշմակնքման չափանիշին:

1) 585
2) 333
3) 417
4) 913

12 Քանի՞ գրամ 999,9 հարգի արծաթ է անհրաժեշտ՝ 15 գրամ 875 հարգի արծաթի համաձուլվածքից 925 հարգի արծաթի համաձուլվածք ստանալու համար:

1) 9 գ
2) 10.5 գ
3) 9.3 գ
4) 10 գ

13 Նշված հարգերից ո՞րն է համապատասխանում ՀՀ-ում ընդունված արծաթի համաձուլվածքի դրոշմակնքման չափանիշին:

1) 875
2) 910
3) 845
4) 999

14 **Ի՞նչ երկարությամբ ձող է անհրաժեշտ 19.75 միլիմետր ներքին տրամագծով մատանի պատրաստելու համար, եթե ձողի հաստությունը 4.5 միլիմետր է:**

1) 76.500 մմ
2) 76.375 մմ
3) 76.145 մմ
4) 76.745 մմ

15 **Նշվածներից ո՞րն է թանկարժեք մետաղ:**

1) տիտանը
2) մոլիբդենը
3) վոլֆրամը
4) արծաթը

16 **Նշվածներից ո՞րն է խորհուրդ տրվում կիրառել սառը արծնեպատված (էմալապատված) իրերի վերանորոգման ժամանակ:**

1) հղկաթղթումը (մանր հղկաթղթով)
2) թամբլերային փայլեցումը
3) երկարատև տաքացումը
4) կոշտ մեխանիկական հղկումը

17 **Նշվածներից ո՞րն է քարերի տեղադրման տեսակ:**

1) շարժական
2) բորներային
3) անշարժ
4) բորներ-կրապանային

18 **Ո՞ր ջերմաստիճանում *չի* հալվի ոսկին:**

1) 960,5 °C
2) 2988,8 °C
3) 1063 °C
4) 1065 °C

19 **Ո՞ր գործողությամբ պետք *չէ* սկսել զարդերի վերանորոգումը:**

1) լվացմամբ
2) կշռմամբ
3) գրանցմամբ
4) զոդմամբ

20 **Հետևյալ գործիքներից ո՞րն է օգտագործվում լարաձգման ժամանակ:**

1) հարթաշուրթը
2) վակումը
3) ծծմբային թթուն
4) մեղրամոմը

21 **Տրվածներից 3-ը օգտագործվում են գլոցման և լարաձգման եղանակով մշակման ժամանակ: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. Լարաձգման տախտակը(ֆիլլեր)
2. Ֆոեզները
3. Գծագրական կարկինը
4. Մեղրամոմը
5. Ձուլումը
6. Կլորաշուրթը
7. Շտանգեն-ցիրկուլը
8. Ձառը
9. Գայլիկոնը

22 **Տրվածներից 3-ը *չի* օգտագործվում փականագործական աշխատանքների կատարման ժամանակ: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. Մոմի զոդիչը
2. Հատիչը
3. Գայլիկոնը
4. Նրբասղոցը
5. Մոդելային մոմը
6. Ֆտորաջրածնային թթուն (պլավիկյանը)
7. Շտանգեն-ցիրկուլը
8. Խարտոցը
9. Մուրճը

23 **Տրվածներից 3-ը *չի* օգտագործվում ձուլման եղանակով մանրակների պատրաստման ժամանակ: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. Գլոցման սարքը
2. Ունելյակը (պինցետ)
3. Ապակյա խառնիչ ձողը
4. Հալամանի բռնիչը
5. A4 ֆորմատի տպագրական թուղթը
6. Զոդանյութը (припой)
7. Խառնիչը (միքսեր)
8. Գիպսը
9. Մուֆելային վառարանը

24 **Տրված պնդումներից 3-ը համապատասխանում են մասնագիտական ներածության և նյութագիտության դրույթներին: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. Պալադիումի քիմիական նշանն է՝ Pt:
2. Չժանգոտվող պողպատները պարունակում են փոքր քանակությամբ օսմիում և րուտենիում:
3. Իրիդիումի խտությունը՝21,45գ/սմ^3 է:
4. ՀՀ-ում ընդունված պալադիումի համաձուլվածքն է՝ 750-ը:
5. ՀՀ-ում ընդունված ոսկու համաձուլվածքն է՝ 916-ը:
6. ՀՀ-ում ընդունված արծաթի համաձուլվածքն է՝ 800-ը:
7. ՀՀ-ում ընդունված պլատինի համաձուլվածքն է՝ 900-ը:
8. Ոսկու հալման ջերմաստիճանն է 1083^{0}C-ը:
9. Ռոդիումը սպիտակ դեղնավուն մետաղ է, կարծր, քիմիապես կայուն է թթունների միջավայրում, բնության մեջ ռոդիումը հանդիպում է ինքնածին արծաթի հետ:

25 **Տրվածներից 3-ի օգտագործումը պարտադիր *չէ* շղթաների պատրաստման ժամանակ: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. Ծծմբային թթուն
2. Հալումը
3. Ազոտային թթուն
4. Զոդումը
5. Գլոցումը (վալցովկան)
6. Գրիչը
7. Նրբախարտոցը (նաթֆիլը)
8. Զոդանյութը
9. Զոդման սարքը

26 **Տրվածներից 3-ը օգտագործվում են ոսկերչական իրի համար նախատեսված համաձուլվածքի պատրաստման ժամանակ: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. Կշեռքը
2. Արծաթը (Ag)
3. Վոլֆրամ (W)
4. Լարաձգման տախտակ (ֆիլլեր)
5. Շտանգեն-ցիրկուլը
6. Միկրոմետրը
7. Պղինձը (Cu)
8. Մուրճը
9. Նրբախարտոցը

27 **Տրվածներից 3-ը *չի* օգտագործվում ոսկյա իրերի նորոգման աշխատանքների կատարման ժամանակ: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. Ոսկու զոդանյութը
2. Շտանգեն-ցիրկուլը
3. Արքայաջուրը
4. Ինժեկտորը
5. Խոշորացույցը
6. Միկրոմետրը
7. Արծաթի զոդանյութը
8. Կշեռքը
9. Փայլեցման սարքը

28 **Տրվածներից 3-ը օգտագործվում են ոսկերչական զարդերի հավաքման և մշակման պրոցեսի ժամանակ: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. Զուլամոմը
2. Բոռ-մեքենան
3. Ինժեկտորը
4. Ոսկերչական դազգահը
5. Սառը արծնը (էմալ)
6. Զոդումը
7. Մոմի զոդիչը
8. Ռետինի մամլիչը (վուլկանիզատորը)
9. Անագե զոդանյութը

29 **Տրվածներից 3-ը *չի* օգտագործվում մոդելային մոմից մանրակների պատրաստման ժամանակ: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. Գծագրական կարկինը
2. Ազոտական թթուն
3. Խարտոցը
4. Չափիչ գործիքը
5. Բուրան
6. Մուրճը
7. Լանցետը
8. Նրբասղոցը
9. Այրիչը

30 **Տրվածներից 3-ը օգտագործվում են հյուսվածքային տեխնիկայով (Ֆիլիգրան) կիսապատրաստվածք ստանալու համար: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. Խոշոր ֆրեզները
2. Ռետինե մամլիչը
3. Հարթաշուրթը
4. Ազոտային թթուն
5. Ռետինե կաղապարը
6. Թիթեղային զոդանյութը
7. Լարաձգման տախտակը
8. Ինժեկտորը
9. Մոմի զոդիչը